

2. ՍՐՎԱՃՅԱՆԻ ԵՎ Ս. ՈՍԿԱՆՅԱՆԻ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՌՆՁԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(2. Սրվաճյանի ծննդյան 150-ամյակի առթիվ)

ՄԻՔԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Հարություն Սրվաճյանը (1831—1874) անցած դարի հայ ականավոր գործիչներից մեկն է՝ հայտնի իր գրական-հրապարակախոսական, հասարակական-քաղաքական լայն գործունեությամբ։ Նա հիմնադրել ու հրապարակել խմբագրել է արևմտահայ դեմոկրատիայի մարտական օրդան «Մեղու» (1856—1865 և 1870—1874) հանդեսը (երկրորդ շրջանում՝ թերթ), եղել է հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի առավել հետևողական գաղափարակից-լիերակիցը հայ իրականության մեջ։ Սրվաճյանի հանդեսի շնորհիվ հայ հասարակական միտքը մեծ վերելք ապրեց, հրապարակային դրսևորում գտան աղղային-աղատագրական պայքարի գաղափարախոսությունն ու խընդիրները։

2. Սրվաճյանը համախմբեց արևմտահայ դեմոկրատներին, հետևողականորեն մերկացրեց սուլթանական քաղաքականության արատները, հայ կյանքի առաջադիմությանը խոչընդոտող ազգային հետադիմությունն ու պահպանողականությունը, ռեակցիոն գործիչներին, պրոպագանդեց Մ. Նալբանդյանի երկերն ու գաղափարները։ Սերտորեն կապված լինելով ժողովրդական զանգվածների հետ, արձագանքելով կյանքի առաջադրած կենսական խնդիրներին, նա չդուրսբերող հալածանքների պայմաններում իր գրչով ու ծավալած գործունեությամբ նպաստեց արևմտահայ կյանքի, ժողովրդական մասսաների զարթոնքին ու առաջադիմությանը, առաջադրեց «Մարդ ապրելու» լոզունգը։ «Ով որ այսօր հող չունի, վաղը հաց չունի», — բանաձևել է 2. Սրվաճյանը՝ Մ. Նալբանդյանի հետևողականությամբ։

Սովետական պատմաբաններն ու բանասերները 2. Սրվաճյանի կյանքն ու գործունեությունը հանգամանորեն ուսումնասիրել են, գնահատել նրա դրական-հասարակական ժառանգությունն ու ավանդը¹, վերահրատարակվել են հրապարակախոսական երկերը²։ Մեր նպատակը համեստ է՝ անդրադառնալ 2. Սրվաճյանի գործունեության դեռևս բավարար չափով չպարզաբանված հարցերից մեկին՝ 2. Սրվաճյանի և Ս. Ոսկանյանի ու նրանց հանդեսների առնչակցություններին և փորձել կատարել որոշ ճշգրտումներ։

Առաջադրվող խնդրի պարզաբանման համար ամենից առաջ հարկ է նկատի ունենալ այն էական պարագան, որ Մ. Նալբանդյանից ու 2. Սրվաճյանից առաջ հասարակական կյանքի ու հրապարակախոսության ասպարեզում ոտք է դրել Ս. Ոսկանյանը։

¹ «Հայ նոր դրականության պատմություն», հ. 2, Երևան, 1962, «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Երևան, 1974, Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955։

² 2. Սրվաճյան, Հրապարակախոսություն, Երևան, 1960։

1853 և 1854 թթ. լույս ընծայած պամֆլետներով՝ Ս. Ոսկանյանն արդեն ի հայտ բերեց լուսավորական-դեմոկրատական իր դավանանքը, իսկ 1855—1856 թթ. խմբագրած «Արևելք» հանդեսում շիտակությամբ բացահայտեց իր հասարակական մտահայեցողությունը և հրապարակախոսական սկզբունքները: «Արևելքով» և Ս. Ոսկանյանի հրապարակախոսությամբ հայ հասարակական մտքի անդաստանում դեմոկրատական ուղղությունը որոշակի տեղ է զբաղում, իսկ 1859 թ. լույս տեսած «Արևմուտքով», որի խմբագիրը նույնպես Ս. Ոսկանյանն էր, ինչպես և «Մեղու» և «Հյուսիսահայլ» հանդեսներով այդ ուղղությունը վերջնականապես հաստատում է լինելիության իր իրավունքը:

«Արևելքի» և նրա խմբագրի դեմ մղված պայքարի հետևանքով հանդեսը հազիվ իր յոթնամսյա շրջանը բոլորած՝ 1856-ի փետրվարին խափանվեց, և Ս. Ոսկանյանը դատապարտվեց մոտ եռամսյա լուսթյան: 1856 թ. սեպտեմբերի 15-ին, «Արևելքի» խափանումից յոթ ամիս անց, լույս տեսավ «Մեղուն»՝ Հ. Սրվաճյանի տնօրինությամբ ու խմբագրությամբ («Հյուսիսահայլը» ասույարեզ իջավ ավելի ուշ՝ 1858 թ. հունվարին):

Արդ, ի՞նչ գաղափարներ էին առաջ քաշել «Արևելքն» ու նրա խմբագիրը և ի՞նչ սկզբունքներ էին դավանում «Մեղուն» ու նրա խմբագիր Հ. Սրվաճյանը: Այս հարցերի պատասխանը երևան կհանի մի կողմից այդ հանդեսների և արևմտահայ ակնավոր հրապարակախոսների գաղափարական առնչակցությունն ու կապը, մյուս կողմից՝ ի հայտ կբերի դեմոկրատական միտումների շարունակականությունը հայ մամուլում, ավելի կոնկրետ՝ անցումն «Արևելքից» «Մեղուին»:

«Արևելքի» անդրանիկ համարը բացվում է մի փոքրիկ առաջաբանով, որտեղ խոսվում է հանդեսի հրատարակության անհրաժեշտության մասին՝ «ազգին մտական կարողությունը» լրացնելու, կամ այլ խոսքով՝ «Հայաստանի լուսավորությունը» նպաստելու ծրագրով: «Եթե մեր պաշտոնը կատարելի ետև,— դրել է Ս. Ոսկանյանը,— Հայաստանի քայլ մը առաջ երթալու պատճառ ըլլամք, և մշուշի մեջ կայծի նման քիչ մը լույս տալի ետև արդարաբար անհետ ըլլամք, այն մեր ճշմարիտ փառքը ու պարծանքը կհամարիմք»³:

Ծրագրային այս խնդիրը, որ Ս. Ոսկանյանը համարում է «արդարև վեհ նպատակ և նվիրական պաշտոն», առաջին անգամ չէ, որ մամուլը հռչակում էր: Բայց ահա իր ծրագրային մյուս կարևոր սկզբունքով «Արևելքը» նոր, դեռևս քաղաքացիության իրավունք չստացած նպատակ էր առաջադրում: «Հառաջաբանը» ազդարարում էր, որ ազգը պետք է վերջ տա տասնամյակներ շարունակ իր հասցեին հնչող շողոթորթություններն ունկնդրելուն «և իր էական պակասությունները պիտի շտկե: Այնքան շոգմոգ գրվածներն բան մը չբուսավ, պրտուղ մը չեկավ... ԱՐԵՎԵԼՔԸ այն աստիճան մեղր բերան չպիտի ըլլա,— շարունակում է առաջաբանի հեղինակ Ս. Ոսկանյանը,— և քանի մը մարդերու հաճելի ըլլալու համար ճշմարտության երեսը չպիտի թքնի կամ մրոտե. այլ պիտի աշխատի որ մեր տղորմելի ազգը իր այժմյա բուն վիճակը իմանա, և իր մահաբույր վերքերու դարման մը տանի»⁴:

³ Տե՛ս «Ներքին համոզում» (Կ. Պոլիս, 1853) և «Հոռոմեական պարզեա» (Զմյուտնիա, 1854) պամֆլետները, որոնք լույս են տեսել ժածկանոններով:

⁴ «Արևելք», 1855, № 1, էջ 2:

⁵ Նույն տեղում, էջ 2—3:

Իր առջև դրած խնդիրն իրագործելու համար Ս. Ոսկանյանը ոչնչի առաջ կանգ չառավ: «Արևելքը», իրոք, մարտական, մտրակահարող օրդան էր: Հայտնի է այն րարձր գնահատությունը, որին արժանացել է հանդեսը մեր պատմագիտության ու բանասիրության մեջ: Հիշենք միայն Լեոյի խոսքերը «Արևելքի» և նրա խմբագրի մասին. «Մի շտեմնված երևույթ էր դա... Այդ ու ձախ շառաշում է Ոսկանի մտրակը, հարվածում է մինչև այդ անսխալական համարված հասկացողությունները, ազգային կուռքերը...: Այդքան կծու ու խիստ լիզուն յուղակի սարսափ էր պատճառում: Ոսկանը հարվածում էր կղերականությունը, չէր քաշվում ազգի «իշխաններից», այսինքն ազդեցիկ աղաներից ու էֆենդիներից: Ուր որ պահանջում էր ճշմարտություն, արդարության գամը, այնտեղ նա միանգամայն անողոր էր»⁶:

Այս էր Հ. Սրվաճյանի ստացած, եթե կարելի է այսպես արտահայտվել, ժառանգությունը. Ս. Ոսկանյանը նրա գաղափարական նախորդն էր, իսկ «Արևելքը»՝ «Մեղուի» վաղամեծիկ եղբայրը: Եվ Հ. Սրվաճյանը տեր կանգնեց իր ծանր ժառանգությանը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա գնացել է «Արևելքի» և Ս. Ոսկանյանի ուղիով:

Նախ նկատենք, որ որևէ հիշատակություն հայտնի չէ այն մասին, թե Հ. Սրվաճյանը և Ս. Ոսկանյանը ծանոթ էին միմյանց: Վկայության բացակայությունը, սակայն, չի բացառում նրանց անձնական ծանոթությունը, որ կարող էր տեղի տնենալ թե՛ Կ. Պոլսում և թե՛ Փարիզում: Իր հանդեսը հրատարակելուց առաջ՝ 1853—1854 թթ., Ս. Ոսկանյանը եղել էր Կ. Պոլսում և բավարար շփումներ ունեցել պոլսահայ գործիչների, այդ թվում Օտյանների (մասնավորապես Գ. Օտյանի) և հասարակական շրջանների հետ: Հայտնի է, որ Հ. Սրվաճյանն իր կրթությունը շարունակել է Պ. Օտյանի տուն-դպրոցում, և մերձավոր կապեր էին հաստատվել նրա և իր դասընկերոջ՝ Գ. Օտյանի միջև: Բացառված չէ, որ այդ ընթացքում ծանոթանային նաև Հ. Սրվաճյանը և Ս. Ոսկանյանը: Ապա՝ 1855-ից մինչև 1856 թ. կեսերը Հ. Սրվաճյանը գտնվում էր Փարիզում, ուր ևս կարող էր ծանոթանալ Ս. Ոսկանյանի հետ, քանի որ հասարակական որոշ խնդիրների առթիվ նա շփվել էր այնտեղ գտնվող բոլոր հայերի հետ: Ավելին. վերհիշելով 1856 թ. կեսերին Փարիզում կայացած հայերի ժողովը, Հ. Սրվաճյանը պատմում է մի «բաղմափորձ անձի» մասին, կարծես թե ակնարկելով Ս. Ոսկանյանին⁷:

Անկախ անձնական ծանոթությունից, հազիվ թե Հ. Սրվաճյանն «Արևելքի» ընթերցողներից մեկը չլիներ և հազիվ թե հիմնելով «Մեղուն»՝ անտեսեր «Արևելքի» փորձը, նրա խմբագրի հրապարակախոսությունը: Այս դեպքում տարօրինակ չպիտի թվա, եթե Ս. Ոսկանյանի և «Արևելքի» ազդեցությունը փնտրենք Հ. Սրվաճյանի հրապարակախոսության մեջ և «Մեղուի» էջերում, թեև վերջիններս 1856-ից մինչև 1859 թ. հունիսը ուղղակի որևէ խոսք չեն ասել առաջինների մասին:

Դիմենք նախ Հ. Սրվաճյանի անդրանիկ հոդվածին՝ հանդեսի հայտարարություն-ծրագրին: Բացատրելով «Մեղուն» հրատարակելու իր նպատակը, Հ. Սրվաճյանը գրում է. «Ազգին ճանչցնել գիտությանց անհատները

6 «Մուրճ», 1901, № 1, էջ 125, 127:

7 «Մեղու», 1857, № 23, էջ 530—539:

և անոնցմե զուրկ ըլլալը. ճշմարիտ աղգասերի մը սրտով առանց շողորորթելու կամ սանկ ըսեմ՝ խաբելու իր պակսությունները իրեն գիտցնել. ինքզինքին վրա ունեցած չափադանց համարումը պակսեցնել... պիտի խրատեմ և հորդորեմ դազզը ստանալ հոգվո կրթություն և կատարելություն ու մտքի մը շակություն...»⁸:

«Արեւելքի» և «Մեղուի» նպատակների նույնությունը բացահայտ է. «Արեւելքը» և նրանից ավելի քան մեկ տարի հետո «Մեղուն» մերժում էին ամուլ շողորորթությունն ազգի հասցեին, որպեսզի նպաստեն նրա «քայլ մը առաջ երթալուն»: Երկու հանդեսներն էլ իրենց համար միջոց էին ընտրում ճշմարտության հռչակումը, ճշմարիտ աղգասիրությունը: Այլ խոսքով ասած, Ս. Ոսկանյանը և Հ. Սրվաճյանը նույն հունդերն էին ցանում ընթերցողի, ժողովրդի մէջ՝ գիտակցելով, որ իրենց հանդեսների ձայնը հաճույք չի պատճառելու ընթերցողների մի որոշակի մասին: Ս. Ոսկանյանը հույս էր հայտնում, որ ազգը ստատոսով զովեստը և անամոթ շողորորթությունը լսելն ետև, քիչ մ'ալ ճշմարիտ քննության և անշահասեր խրատի ականջ պիտի դնե⁹, իսկ Հ. Սրվաճյանը խորհուրդ է տալիս, թե «ով որ լուզե մեզ մտիկ ընել, թող գոցե իր ականջները ու մեղվի մը ձայնը բղղալեն ավելի ազդեցություն լունենար ըսելով, թողնե մեղ, որ բղղանք»¹⁰:

Ինչպես «Արեւելքի» ու «Արեւմուտքի», այնպես էլ «Մեղուի» էջերում այն ելակետային սկզբունքներն աստիճանաբար ամրապնդվել են, խորացել, կազմել նրանց խմբագիր-հրապարակախոսների գործունեության հիմքերի հիմքը, հավատամքը:

Հրապարակ գալուց շատ չանցած՝ տակավին 1855 թ. հոկտեմբերին, «Արեւելքը» Ս. Ոսկանյանի հոգվածով արձանագրեց, թե ազգի առաջադիմության համար հարկ է, «որ ճշմարիտ և հուռթի բանակոծվը մեր մեջն ալ մտնա և դմեղ անձնական կովիներե ազատե»¹¹: 1859-ին «Արեւմուտքը» հենց առաջին հոգվածում դատապարտեց «սուտ ազգասիրությունը», իսկ փետրվարի 1-ի համարում հանդես եկավ դրույթային մի հոգվածով, որ կրում է կտրուկ խորատի՜ր՝ «Աղգային պակսություն»: Այստեղ Ս. Ոսկանյանը մերժում է մի «շլամիս հայի» (համալսարան Հ. Կրճիկյանի) քարոզը, թե «ամեն աղգային կպարտավորի... իր ազգին պակսությունները ծածկել օտարներու առջև»¹²: Ըստ որում, Ս. Ոսկանյանին հղած մի նամակում Հ. Կրճիկյանը պահանջում էր. «Ձեր լրագրո բերանը փոխեցեք...»¹³: Ս. Ոսկանյանը հզորազոր ձայնով նույն հոգվածում ազդարարում էր. «Մեզի համար ազգասիր է այն մարդը, որ պակսություն մը կհայտնե, կնկարագրե և դարման կընտռե, և աղգասեր այն, որ ջանք կընե ամեն բան ծածկելու...: Հայրենասիրության թյուր ըմբռնում է իր ազգը միշտ զովել, համեմայնի արդարացնել և հին նախապաշարումով օտարը թշնամի սեպել»: Ըստ այսմ, Ս. Ոսկանյանը գտնում էր, որ «ամեն աղգային թերություն հիմնավոր պատճառներ ունի», թե «անկարելի է, որ հայերու պես

⁸ Հ. Սրվաճյան, նշվ. աշխ., էջ 40—41:

⁹ «Արեւելք», 1855, № 1, էջ 2:

¹⁰ Հ. Սրվաճյան, նշվ. աշխ., էջ 42:

¹¹ «Արեւելք», 1855, № 10, էջ 297:

¹² «Արեւմուտք», 1859, № 3, էջ 17:

¹³ Նույն տեղում, № 7, էջ 51:

ժողովուրդ մը, հինգ դարե ի վեր երկրի երեսը սփռելն և անլուր տառապանք կրելն ետեւ, պակսութիւններ շունենա, վասնզի պարագաները հարկավ կազդեն սիրտերու և մխթեցողութեամբ¹⁴։ Այս սկզբունքը Ս. Ոսկանյանն արդեն 1864-ին հասցրեց գրեթէ մասնամատիական բանաձեւի. «Ազգի մը պակասութիւնները միշտ պարտկել վերք մը պահելու կնամանի և թի շուտ, թի ուշ ծանր հետեւութիւն ունի... Ազգասիրութիւն չէ այն զգալութիւնը, որ ազգին պակսութիւնները կսիրե, հապա ախտասիրութիւն»¹⁵։

1857 թ. փետրվարին Հ. Սըվաճյանը նամակ էր ստացել ոմն («Մ. Տ. Յ.») «բարեկամից», որը ցավ էր հայտնում, թե «Մեղուի» էջերում հանդիպում են զվարճախոսութիւններ ու ծաղր։ Նրա կարծիքով լրագրագետը պետք է ձգտի արժանանալու ընթերցողների շնորհակալութեանը, մինչդեռ «Մեղուի» խմբագիրը արհամարհանք է առաջացնում, որովհետեւ հանդեսը խայթոցներ է պարունակում։ Նամակի հեղինակը դիմելով Հ. Սըվաճյանին, հույս էր հայտնում, թե նա իր զվարճախոսութեան ընթացքը կփոխի կամ կմեղմի¹⁶։ Այլ խոսքով, նամակագիրը ներկայանալով իրրեւ «հասարակութեան կողմանէ մոռնալի» (և իրոք նա միայնակ չէր), զգուշացնում է «Մեղուին» և նրա խմբագրին՝ խուսափել քննադատական, «ծաղրաշարժական» նյութերից։

Հաւուր սլատշաճի պատասխանելով նամակի հեղինակին¹⁷, Հ. Սըվաճյանը խոստովանում էր, որ ուրիշներից ևս նման գանգատներ է լսել, որ իմ մասին ասվում է, «թե ազգը վար կզարմեմ կոր, որով ազգս պատվելու ու փառավորելու փոխանակ՝ դանի սնպատիվ կընեմ կոր հաշտ օտար ազգաց, ծաղրաշարժութեան համար ան աս կրամրաւեմ կոր...»։ Եւ ի՞նչ է պատասխանում այս ամենին Հ. Սըվաճյանը։ «Մինչև այսօր,— գրում էր նա,— մեր սզգին մեզ ձեռքը դրիչ առնողները իրենց ազգին բարութեան մը ընել համարելով զանի հանձափս գովելու և անտեղի շողոքորթութեամբ մը անոր պակսութիւնները ծածկելը, ընթերցողներն ալ սովորե են միշտ գովեստ լսելու ուստի իրենց ծանր կթվի կոր երբ մեկ ճշմարտասեր մը կամ ազգին ճշմարիտ բարութեանը փափաքող մը, անոնց կարծեցյալ վեհանձնութիւնը ամենաթեթեւ կերպով մը վիրավորե. անարդանց և անիծից արժանի կդատապարտվի կոր այն, որ հր ազգին պակսութիւնները ամենուն աշացն առչել գնել ուխտ կընե...»։ Հ. Սըվաճյանն այնուհետեւ շարունակում է. «Մենք կկարծենք թե լրագրագետ ըլլա. հեղինակ ըլլա... պարտավոր է ազգին կատարելութիւնները գոված ատենը, պակսութիւններն ալ հաշվելու և ցուցնելու։ Ո՛ր ախելքն է այն, որ կհամարձակի ըսել թե վերք մը ծածկելով կբժշկվի. միթե չգիտե՞ր թե մենք լռենք նե՝ մեր պակսութիւնները օր օրի ավելի ամուր կհաստատվին մեր վրա և այն ատենը ամեն աշխատութիւն ոչինչ կըլլա...»։

Անհայտ է, որ Հ. Սըվաճյանը և Ս. Ոսկանյանը նույն լեզվով են խոսում և նույն գաղափարն են պաշտպանում։ Ազգային պակասութիւնը վերք է, և երկու հրապարակախոսներն այդ վերքի բուժումը դիտում են իբրեւ ահհրաժեշտ վիրահատութիւն։ Նրանք այդ ասպարեզում խմբագրի դերը նույնացնում են բժշկի, ավելի ճշշտ վիրաբույժի դերի հետ և գտնում, որ ինչպես

¹⁴ Նույն տեղում, № 3, էջ 17—18։

¹⁵ Նույն տեղում, 1864, № 9, էջ 68։

¹⁶ «Մեղու», 1857, № 13, էջ 291։

¹⁷ Նույն տեղում, էջ 292—295, Հ. Սըվաճյան, Նշվ. աշխ., էջ 45—48։

վիրաբույժը պարտավորված է ուշադրություն չդարձնել հիվանդի ընդդիմություններ, այնպես էլ խմբագիրը պարտավոր է չընկրկել ազգային պակասությունները բացահայտելուն ու վերացնելուն ընդդիմացողների առջև: Հ. Սրվաճայանն ուղղակի հայտարարում էր, որ իբրև հրապարակախոս չի շտապում օր առօր ընդունելու ընթերցողների շնորհակալությունները՝ «շնորհակալությունը ուրիշ ատեն կպահանջեմ ես անոցմեմ»: Նա գտնում էր, որ եթե նույնիսկ իրեն անարգեն, արհամարհեն, «Մեղուն գետնե գետին զարնեն»՝ զա հենց այն շնորհակալությունն է, որ ուրախություն կպատճառի, քանի որ «ասանկ ընդունելը իրենց հանցավոր կամ պակասավոր ըլլալին ճանշած են»: Ի վերջո, Հ. Սրվաճայանն այսպես է արտահայտում իր հրապարակախոսական հավատամքը. «Թրիշը ձեռքս շառած ուխտ ըրած եմ կարելի եղածին չափ շողոթորթութենե հեռու փախչելու և ճշմարտության առաջնորդած շավղին հետեւիլը սրբազան պարտք մը համարած եմ ինծի... վաստակի կամ պատվո կամ համբավի հույսով ազգը խաբելու չէ. իմ պարտքս ես ասանկ կճանչեմ...»: Իր գործունեության ընթացքում Հ. Սրվաճայանը հավատարիմ է մնացել այս դավանանքին. հալածվել է, պատիժներ կրել, նրա հանդեսը քանիցս փակվել է, բայց նա մնացել է աներբու: Այդպիսին էր նաև Ս. Ոսկանյանը: Եթե շարունակենք թերթել «Մեղուի» համարները, ապա շատ այլ ընդհանրություններ կգտնենք Հ. Սրվաճայանի և Ս. Ոսկանյանի միջև: Հետաքրքրական է, օրինակ, Հ. Սրվաճայանի «Հայաստան» (Մեղու, 1862, № 149) և Ս. Ոսկանյանի «Հայրենիք և հայրենասիրություն» (Արևմուտք, 1864, № 8) հոդվածների համադրումը, ուր միևնույն ոճով է խոսվում մայր Հայաստանի մասին: Նույն ընդհանրությունն առկա է նաև երկու հրապարակախոսների այն հոդվածներում, որոնք նվիրված են Ազգային սահմանադրության գործադրմանն ու գոյատևմանը: Կամ՝ «Մասիս» թերթի դեմ «Մեղուի» մի շարք նյութերի (1865) համադրումը «Արևմուտքի» 1859 թ. դեկտեմբերի 15-ի համարում տպագրված «Մասիսի գետնահարկը» հոդվածի հետ ցույց է տալիս, որ երկու հանդեսների դիրքորոշումը գրեթե նույնական է: Հարանման է Հ. Սրվաճայանի և Ս. Ոսկանյանի վերաբերմունքը «Հյուսիսսփայլի», ժողովրդական խավերի («Ուսմիկ»), կրոնի ու կրոնավորների, ազգային լեզվի, օտարամոլության, ազգային միասնության, ազգային վերադաս վարչության գործունեության, «չհայ» գործիչների նկատմամբ, ինչպես և մի շարք այլ սկզբունքային հարցերում:

Դավանած միանման սկզբունքներին հակառակ, ինչպես նշվեց, «Մեղուի» առաջին երեք ու կես տարիներին համարներում որևէ ուղղակի հիշատակություն չկա Ս. Ոսկանյանի կամ նրա հանդեսների մասին: Որևէ առիթով Հ. Սրվաճայանի ու «Մեղուի» մասին խոսք չի ասել նաև Ս. Ոսկանյանը:

Առաջին հայացքից տարօրինակ թվացող այս հանգամանքը կարոտ է հատուկ բացատրության: Կարծում ենք երկուստեք դրսևորված, այսպես ասած, «անտարբերությունը» մտածված տակտիկական քայլ էր, միմյանց նկատմամբ տածած համակրանքը, իրենց գաղափարակցությունը գիտակցաբար թաքցնելու կամ բացահայտորեն չդրսևորելու փորձ, որ արվել է հակառակորդներին միասնական ճակատով իրենց դեմ հանդես գալու առիթ չտալու համար: Ներքևի է ենթադրել, որ Հ. Սրվաճայանը նույն տակտիկական նկատառումով խուսափել է բացահայտել իր համակրանքը հեղափոխական շարժումներին մասնակցած Ս. Ոսկանյանի նկատմամբ, թերևս նաև չի ցանկացել

իր դեմ ուղղել Ս. Ոսկանյանի դեմ բորբոքված ամիրակղերական զայրույթը։ Նույն նկատառումներով թերևս Ս. Ոսկանյանը ևս գիտակցաբար չի դրսևորել իր վերաբերմունքը Թուրքիայի պայմաններում գործող Հ. Սրվաճյանի և իր պարբերականների դիմակից «Մեղուի» նկատմամբ։

1859 թ. հունիսին, երբ վեցերորդ ամիսն էր, ինչ Ս. Ոսկանյանը հրատարակում էր իր երկրորդ պարբերականը՝ «Արևմուտքը», Հ. Սրվաճյանը խախտեց լուսթյունը, բայց, ըստ երևույթին, ոչ իր կամքով։

«Մեղուի» որոշ ընթերցողներ, որոնք, անշուշտ, հետևում էին նաև Ս. Ոսկանյանի «Արևմուտքին», դիմում էին Հ. Սրվաճյանին՝ թե ինչու «Մեղուն» ոչինչ չի գրում «Արևմուտքի» մասին։ Հ. Սրվաճյանը, նման խնդրանքները նկատի ունենալով, խոստանում է հաջորդ համարում «անոր վրայոք խոսել» և, իրոք, «Մեղուի» 1859 թ. հունիսի 30-ի համարում զետեղում է ընդարձակ հոդված և մեկէջյա շարժանկար՝ նվիրված Ս. Ոսկանյանին ու «Արևմուտքին»։ Հոդվածի հեղինակը հավանաբար ինքը՝ «Մեղուի» խմբագիրն է։ Առաջին անգամ և այն էլ ընդարձակ անդադառնալով «Արևմուտքին» ու նրա խմբագրին, «Մեղուն», կարծես թե երգիծանքով, մինչև անգամ ծաղրով է վարձատրում նրանց։ Այդ հոդված-երկխոսությունը և նրան կցված շարժանկարն այդպես էլ մեկնաբանվել է պատմաբանասիրական որոշ ուսումնասիրություններում¹⁸։ Սակայն թե մեկը, թե մյուսը, մեր կարծիքով, այլ իմաստ ունեն և իրենց սուր ծայրով Ս. Ոսկանյանի կամ «Արևմուտքի» դեմ չեն ուղղված։ Ի՞նչ է ասվում «Մեղուի» շորս էջը զբաղեցնող անստորագիր հոդվածում։ Դա սոսկ վերարտադրում է «Ժողովուրդին, այսինքն բազմության զրուցածը», որից հեղինակը ներկայացնում է իր ունկնդրած «տաս հազարեն մեկը»¹⁹։ Զրուցողները՝ Ս. Ոսկանյանի և նրա «Արևմուտքի» մասին կարծիք հայտնողները, «սպիտակ ջուրի»՝ օղու սիրահարներ են։ Նրանք իսկույն գտան, որ «Արևելքի» և «Արևմուտքի» գրածները «բոլորովին հակառակ» են միմյանց և իրենց հռչակելով «ոսկանատյացներ», հաշվեհարդար տեսան՝ «մեծ հանդեսով էրեցին Արևմուտքները»²⁰։ Մի ժերունի գտնում է, որ հայերն «Արև-

18 Ա. Մակարյան, Միքայել Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան, Երևան, 1946, էջ 66, Գ. Գասպարյան, Հարություն Սրվաճյան, Երևան, 1958, էջ 74—75, 114—115, Ս. Բաղյան, Հարություն Սրվաճյան (տե՛ս Հ. Սրվաճյան, նշվ. աշխ., առաջաբն, էջ 15), Ա. Ասատրյան, Հարություն Սրվաճյան, Երևան, 1967, էջ 33—34 և այլն։ Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը «Մեղուի» այդ ելույթի առթիվ նկատել է, որ «Սրվաճյանի թերթը ևս ձայնակցեց Ոսկանյանի հակառակորդներին» (Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 400)։

19 «Մեղու», 1859, № 18, էջ 138—141, 144։

20 Ս. Ոսկանյանի և նրա հանդեսի դեմ 1859 թ. հունիսին կամ հուլիսին Կ. Պոլսում (Հ. Փափագյանի տպարանում) տպագրվել և տարածվել է հատուկ թուղթիկ (պե՛ս թերթ), որը կոչ էր անում, թե «Արևմուտք լրագիր էրեցեք, մրկեցեք, փոշի դարձուցեք, որպեսզի ուրիշ մեկն ալ անոր ռճեն կամ հանդեմաբար զրուցվածքեն չխաբվի...»։ Առանձին հոդվածով անդադառնալով այդ թերթիկին, Ոսկանյանը դրել է. «Եվ այս վերջին խրատը կտպվի և ի գործ կդրվի պոլսեցի հայերեն 1859-ը թվականին։ Բայց այրելը պատասխանել չէ։ Բանադրանքի սպառնալիքը ոտքերնուս ներքև դրինք, հրաբուխ սպառնալիքին վրա կթքենք։ Մեր լրագրին փռչին, օր մը, մեզ ավելի պատիվ պիտի ընեն, քան թե մեր դուլզն և պակասավոր աշխատասիրությունը։ Թյուրքերը գրատուն մ'այրեցին բաղնիք տաքացնելու համար։ Թյուրքի հպատակ պոլսեցի քանի մը հայեր օրագիր կայրեն իրենց կատաղությունը մարելու համար։ Կերևի թե լուսավորչյանք բավական լույս չուտին և կրակի տված օրագիրներու լույսով կուղեն լուսավորվի։ Այս կերպով Արևմուտքի՛ն թերթերը զո՛նե վայրկյան մը լույս տված եղան» («Արևմուտք», 1859, № 15, էջ 118)։

մուտքի» «ետեհն շեն երթար», նրա խորհուրդներն ու զգուշացումներն անտեսում են: Մեկ ուրիշը պարզապես հանդեսի համարը պահում է ծածուկ մի տեղ՝ այն բանից հետո, երբ պարզվում է, որ հանդեսը հենվում է 1789-ի, 1831-ի, 1848-ի և 1852-ի հեղափոխությունների ընձեռած առաջադիմության վրա: Մեկ ուրիշը հանդեսն անվանում է «Արևմուտ» և վերհիշում նրա մասին մի զավեշտապատում: Մի այլ տեղ այն կարծիքն է հայտնվում, թե «Արևմուտքի» «արևը մութ ըսելու է... ճերմակին սև, սևին ճերմակ ըսելու պես»: Խոսակիցը գանգատվում է, թե իրեն «ամենեն դժվար եկածը սա է, որ հայերեն է, ու շեմ հասկնար» և դեռ ֆրանսերեն հատվածներ էլ է պարունակում: Եվ այլն: Վերջում արվող հետևությունը հանգում է այն բանին, թե «Մեղուին ընթերցողներն արդեն Արևմուտ էին կարդար», իսկ եթե «Մեղուն» շատ խոսի «Արևմուտքի» մասին՝ «ան ալ շեն կարդար»:

Գրեթե նույն իմաստն է արտահայտում նույն համարում զետեղված շարժանկարը. «Արևմուտքի» կապուցը ձեռքն առած Ս. Ոսկանյանը ներխուժել է Կ. Պոլիս: Նրա վրա են հարձակվել մահակներով ու ծառաճյուղերով զինված 5—6 պոլսեցիներ: Ծաղրանկարի խորագիրն է. «Արևմուտքին ընդունելությունը ի Պոլիս»: Տակը զետեղված եռատող մակագրության վերջակետով ավարտվող առաջին երկտողը նույն պոլսեցիների բացականչությունն է ու զայրացած հարցումը.

«Քու լուսավորությունդ Բարիզի մեջ ծախե:

Մեր քետիները մնտռելու եկար»:

Ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ «Մեղուի» և՛ հոգվածում, և՛ շարժանկարում ակնհայտորեն ծաղրված են պոլսեցիները, նրանք, ովքեր աշմկում էին «Արևմուտքի» և նրա խմբագրի դեմ, չէին ըմբռնում նրանց խոսքն ու հորդորանքը, հանդես էին բերում տգիտություն, մամուլի և հրապարակախոսների, տվյալ դեպքում «Արևմուտքի» և Ս. Ոսկանյանի (իսկ ինչու չէ՝ նաև «Մեղուի» և հենց Հ. Սըվաճյանի) դեմ բռնուցք, մահակ ու ցախավել էին ճոճում, փորձում են այդպիսով իրենց «քետիները» մաքուր պահել եվրոպական լուսավորությունից ու ֆրանսիական ազդեցությունից:

Թվում է, որ այս է «Մեղուի» հոգվածի և շարժանկարի բուն, ենթատեքստային իմաստն ու նպատակը և բնավ ոչ երբեք «Արևմուտքի» և նրա խմբագրի գաղափարախոսությունը ծաղրելը, ինչպես ենթադրվել ու մեկնաբանվել է մինչև հիմա:

Առնվազն անհիմն է Ա. Մակարյանի պնդումը, թե Ս. Ոսկանյանի ու նրա «Արևմուտքի» մասին Հ. Սըվաճյանի հրատարակած հոգվածը «մի ոչնչացնող պամֆլետ» է, իսկ շարժանկարով իբրև թե «նա հանձնարարում էր Պոլսի հայերին «Արևմուտքը» ցախավելով մաքրել փողոցներից»²¹, Անհիմն է նաև Ա. Ասատրյանի, ոչ առանց նախորդների ազդեցության կատարած ընդհանրացումը, թե «Սըվաճյանն... սկզբի տարիներին մինչև իսկ թշնամություն և արհամարհանք արտահայտեց նույն այդ մարտական առաջադիմական օրգանի (Արևմուտքի) — Մ. Հ.) նկատմամբ»: Նա հիշյալ հոգվածը համարում է «անվանարկիչ երգիծանք Ս. Ոսկանյանի ու նրա ամսագրի վերաբերյալ»:

21 Ա. Մակարյան, Նշվ. աշխ., էջ 66:

Ավելին, բանասերը, թույլ տալով փաստական որոշ անճշտություններ, հնարավոր է համարել կարծիք հայտնելու, թե իր այդ «անվերապահ բացասական վերաբերմունքով» Հ. Սրվաճյանն «արտահայտում էր նաև «Մեղուի» խմբագրի բացասական վերաբերմունքն Արևմուտքի—Եվրոպայի, եվրոպական քաղաքակրթության և հասարակական-քաղաքական շարժումների նկատմամբ ընդհանրապես», թե այստեղ առկա է «ոչ միայն լիբերալիզմը, այլև պահպանողականությունը», թե «Սրվաճյանն անքննադատորեն հետևում էր իր երբեմնի ուսուցչի՝ Խաչատուր Միսաքյանի հետադիմական ընթացքին»²²։ Նույնպես հիմնավորված չէ բանասեր Ս. Բազյանի ենթադրությունը, թե «Սրվաճյանի նույթը Ոսկանյանի դեմ» Գրիգոր «Օտյանի լիբերալիզմի անմիջական աղդեցության արդյունքը պետք է համարել», թե հիշյալ հոդվածի հեղինակը «ծանակում էր դեմոկրատ Ոսկանին, նրա մղած պայքարը»²³։ Այդ ուսումնասիրողներն ուշադրություն չեն դարձրել այն էական հանգամանքի վրա, որ «Մեղուի» հոդվածում չի առարկվում «Արևմուտքի» առաջին 10—11 համարներում առաջ քաշված ոչ մի հարց, էական չի քննվում կամ հերքվում Ս. Ոսկանյանի գաղափարական դրույթներից և ոչ մեկը։

Վերևում շարադրված մեր բացատրության համար կոնկրետ փաստի ուժունի և վավերական հիմք է նաև «Մեղուի» № 18-ը եզրափակող հիշյալ շարժանկարի մակագրության վերջին՝ երրորդ, ինքնուրույն տողը, որը կցված է Ս. Ոսկանյանի ու նրա հանդեսի վրա հարձակվողների բացականչությանը։ Դա, կարելի է ասել, Հ. Սրվաճյանի դատապարտող խոսքն է ընդդեմ «Արևմուտքի» հակառակորդների և, ի դեպ, արձագանքն է Ս. Ոսկանյանի բազմիցս կրկնած խոսքերի՝ նույն հակառակորդների դեմ։

«Ապերախտ հայեր, խավարյալ հայեր»։

Դժվար չէ ըմբռնել այն ցատումը և դատապարտող շեշտը, որոնք խտացվել են Հ. Սրվաճյանի այս վերջնատողում²⁴։ Ո՞ւմ դեմ են դրանք ուղղված՝ պոլսեցի ռամիկի՞, փողոցները մաքրողների՞ դեմ։ Բնավ ոչ։ Հազիվ թե «Արևմուտքի» գաղափարներն ու պահանջները նույն մշակների, փահլանների, բեռնակիրների ու փողոցներն ավլողների սրտովը չէին։

Մեր կարծիքով Հ. Սրվաճյանի ծաղրի նշանակետն առհասարակ հետադիմությունն ու խավարամտությունն է, իսկ ավելի կոնկրետ՝ նրա խոսքը հայտնի չափով ուղղված է «Մասիսի» և նրա խմբագիր Կ. Ութուճյանի դեմ։

²² Ա. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 33—35։ Նկատենք, որ Խ. Միսաքյանն իր հիշյալ «ընթացքը» դրսևորել է ավելի ուշ, քան Հ. Սրվաճյանը, և որ վերջինս իր հոդվածի վերնագիրը չէր կարող «վերցնել» ուսուցչի դեռևս չգրած ու չտպագրած հոդվածից։ Հ. Սրվաճյանի հոդվածի վերնագիրը պարզապես «Արևմուտքի» ճակատն է՝ ենթատիտղոսով։ Այդպես է վերնագրված նաև Խ. Միսաքյանի հոդվածաշարքը, որի տպագրությունը սկսվել է 1859 թ. սեպտեմբերի 17-ին՝ «Մասիսում»։

²³ Ս. Բազյան, նշվ. աշխ., էջ 15։

²⁴ Այդ տողը, ի դեպ, բանասեր Ա. Ասատրյանը (նշվ. աշխ., էջ 33, 34) չգիտես ինչու, դուրս է թողել շարժանկարի մակագրության մեջբերումից։ Ապա բանն այնպես է պատկերել, թե Հ. Սրվաճյանն արձագանքել է «Արևմուտքի» հենց առաջին համարին, թե նա երկու հոդված է հրատարակել հանդեսի և նրա խմբագրի դեմ։ Իրականում Հ. Սրվաճյանն իր ձեռքի տակ ունի հանդեսի 10—11 համարները և «Մեղուի» միայն № 18-ում է անդրադարձել դրանց։

Այդ ենթադրության համար, թվում է, բավարար հիմք է «Մասիսի» 1859 թ. հունիսի 25-ի համարում լույս տեսած անվերնագիր ու անստորագիր «խայտառակ» հոդվածը (արտահայտությունը Ս. Ոսկանյանին է, որը փոխ է առել հենց «Մասիսից»)։ «Մեղուն» հանդես եկավ այդ հոդվածը հրատարակվելուց հինգ օր հետո՝ հունիսի 30-ին։ Հ. Սըվաճյանը չէր կարող անտարբեր մնալ «Մասիսի» այդ հոդվածի նկատմամբ։ Դա, իրոք, խայտառակ հոդված էր։ Նրա հեղինակը, որ Ս. Ոսկանյանի ակնարկներից դատելով Հ. Կրճիկյանն է (կամ հեղինակը, որ Ս. Ոսկանյանի ակնարկներին մեղադրել է ամենաթունդ արտահայտություններով, նրան վերագրել է ամենածանր «հանցանքներ»՝ աղավաղելով նրա ամբողջ կենսագրությունը՝ դպրոցական տարիքից սկսած մինչև «Արևմուտքը» հրատարակելու՝ Մեղադրանքների շարանը ներառվում է նաև Ս. Ոսկանյանի համերաշխությունը Մ. Նալբանդյանի հետ, որը մասնավորապես արտահայտվել էր Հ. Խալիպյանի և Գ. Ալվազովսկու դեմ նրա գրած հայտնի պամֆլետի արտատպությամբ՝ «Արևմուտքի» հունիսի 1-ի և 15-ի համարներում, իսկ դրանից առաջ Ս. Ոսկանյանի ամենաքեղմ վերաբերմունքով՝ «Հյուսիսափայլի» նկատմամբ։

Ս. Ոսկանյանը «Մասիսին» և նրա հոդվածի հեղինակին հզոր պատասխան է տվել «Արևմուտքի» 1859 թ. սեպտեմբերի 1-ի համարում. նրա պատասխան հոդվածը՝ «Քսանչորս ստույթուն», կարելի է դասել 1850-ական թվականների հայ լավագույն պամֆլետների շարքը։ Եվ չափազանց հետաքրքրական է, որ Կ. Ութուճյանին պատասխանելով Ս. Ոսկանյանը ոչ մի բառով չի անդրադարձել «Մեղունին», որևէ ակնարկ չի արել Հ. Սըվաճյանի հասցեին։ Այս էական հանգամանքը ևս գալիս է հաստատելու, որ Ս. Ոսկանյանը և Հ. Սըվաճյանը լավ էին ըմբռնում միմյանց։

Սակայն խնդիրը միայն այն չէ, որ Հ. Սըվաճյանը և նրա «Մեղուն» չկրկնեցին իրենց «բացասական» ելույթն «Արևմուտքի» և նրա խմբագրի դեմ։ Տեղի է ունեցել բոլորովին հակառակը, և դա ավելի քան բնական է։ Եվ եթե այդ շրջադարձ էր և եթե դա, իրոք, կարելի է վերագրել Մ. Նալբանդյանի²⁵ շնորհավոր ազդեցությանը, ապա նախ պետք է ճշտել, որ պարզապես տեղի է ունեցել դրական վերաբերմունքի բացահայտ դրսևորում, վերաբերմունք, որ բխում էր Հ. Սըվաճյանի ներքին համոզմունքից։ 1860—1863 թթ. ընթացքում փոփոխվող իրադրության պայմաններում Հ. Սըվաճյանի համար, անշուշտ, պարզ է դարձել, որ տակտիկական նկատառումներն արդեն ինքնանպատակ են և հետադիմության ընդհանուր պայքարը թելադրում է առաջադիմական-դեմոկրատական ուժերի համախմբման անհրաժեշտությունը։

Նախ նկատենք, որ Ս. Ոսկանյանի նկատմամբ Հ. Սըվաճյանի դրական վերաբերմունքը դրսևորվել է աստիճանաբար, մի տեսակ կամաց-կամաց։ Այն տարիներին՝ 1860—1863 թթ., երբ «Արևմուտքը» չէր հրատարակվում, «Մեղուն» հաճախ է հիշել Ս. Ոսկանյանին և նրա հանդեսը, դիմել է նրանց օգնությանը, քաղվածքներ արել նրանցից։ Խոսելով «տեր» և «պարոն» բառերի մասին, «Մեղուն» 1860 թ. հունվարին (№ 86) հիշատակել է, որ վերջին բառը «ողորմած հոգի Արեմուտի» հաճախ գործածած մականունն է։ Դա, ի դեպ,

²⁵ Ա. Մ ա կ ա ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 66, Գ. Գ ա ս պ ա ղ յ ա ն, նշվ. աշխ., էջ 114—115, Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 400։

թերթի այն համարն է, ուր հատվածներ են զետեղված Մ. Նալբանդյանի «Հիշատակարանից»:

«Մեղուն» շարունակելով այն պայքարը, որ Գ. Այվազովսկու դեմ սկսել էր Ս. Ոսկանյանը, 1861 թ. մայիսին (№ 133) հրատարակել է «Գաբրիել վարդապետ Այվազովսքի և ազգային խալիպյան վարժարան, որ ի Թեոդոսիա» հոդվածը և նրա ծանոթագրությունում քաղել «Արևմուտքում» 1859 թ. փետրվարի 1-ին տպագրված Ս. Ոսկանյանի «Գաբրիել» հայտնի սատիրական շափածոյի տողերը, որոնցով լրացրել է հոդվածում արտահայտված միտքը: Այդ նույն հոդվածի շարունակության մեջ (№ 135), դարձյալ ծանոթագրությունում, ընդարձակ քաղվածք է բերվում Ս. Ոսկանյանի «Հավելված» վերնագրով պամֆլետից, որը ևս ուղղված է Գ. Այվազովսկու դեմ²⁶: Ըստ որում, այդ պամֆլետը տպագրված է «Արևմուտքի» 6-րդ, իսկ «Գաբրիելը»՝ 3-րդ համարում՝ հանդեսի այն 10—11 համարներից երկուսում, որ «Մեղուն» քննադատում էր վերը հիշված հոդվածում²⁷:

Բայց հարցը միայն այդ չէ. «Մեղուն» Գ. Այվազովսկու մասին խոսելիս նկատում է, թե «Ժողովուրդը մինչև ցայժմ զնա աղեկ հասկցած չէ», ապա անմիջապես տալիս է հետևյալ նշանակալից ծանոթագրությունը. «Ամենից առաջ զնա հասկացավ և հրատարակեց անոր ինչ ըլլալը՝ Ս. Ոսկանյան, որ ամենն առաջ ալ անոր շարության փորձը իր վրա փորձեց»: 1861 թ. մայիսին արտահայտած իր այս համակրանքով «Մեղուն», կարծում ենք, տեղ չի թողնում այն ենթադրությունների համար, որ արվել են նրա խմբագրի և Ոսկանյանի հարաբերությունների շուրջը: «Մեղուն» և 2. Սըվաճյանը թողել են նաև այլ վկայություններ՝ Ս. Ոսկանյանի և «Արևմուտքի» նկատմամբ արդեն ի սկզբանե ունեցած իրենց անվերապահ դրական վերաբերմունքի մասին: 1863 թ. փետրվարի 19-ի համարում «Մեղուն» արձանագրել է, որ «Հյուսիսափայլը» դադարել է, և բացատրել, որ դա տեղի է ունեցել թշնամիների հարուցած հալածանքների հետևանքով, որոնց համար ամսագիրը հաճելի չէր իր «ազատասիրությամբը, իրավասիրությամբը և անաշառությամբը»: Եվ ապա «Մեղուն» նկատել է. «Ինչ բանի համար, որ Նոյաճաղալճիքն դադրեցավ, ինչ բանի համար, որ Արևմուտքն ու Արևելք դադրեցան, ահա նույն բանի համար է, որ Հյուսիսափայլն ալ այսօր կդադարի: Այն գրիչները, որ այս օրագիրները շարադրեցին,— շարունակում է «Մեղուն»,— որոնք կրնանք ըսել՝ այսօրվան օրս ազգին մեջ երևցած առաջին գրիչներն էին»²⁸: Նույնպիսի զուգակշիռ է կատարվում «Մեղունի» մարտի 12-ի համարում զետեղված այն հոդվածում, որն ամենայն համերաշխությամբ արտատպվել է

²⁶ «Մեղուն», 1861, № 133, էջ 117—119, № 135, էջ 133—136:

²⁷ «Արևմուտք», 1859, № 6, էջ 43—47, № 3, էջ 20—21: Ի դեպ, մեզ թվում է, Ս. Ոսկանյանի հետ է կապվում նաև «Մեղունի» այդ հոդվածի մի այլ ծանոթագրությունը, որը միաժամանակ կարծես թե լույս է սփռում Մ. Նալբանդյանի «Հիշատակարանի» մի հատվածի վրա (Հմմտ. Մ. Նալբանդյան, ԵՊԺ, հ. 2, Երևան, 1945, էջ 451—452 և «Մեղուն», 1861, № 135, էջ 135—136): Հավանաբար քահանաների մասին միմյանց լրացնող հաղորդումները, հավանաբար, նույն փաստերն են արձանագրում և նույն անձնավորության մասին են:

²⁸ «Մեղուն», 1863, № 189, էջ 53:

Զմյուռնիայում լույս տեսնող դեմոկրատական «Մաղիկ» հանդեսի մարտի 10-ի համարից²⁹, հատուկ ծանոթագրությամբ³⁰:

Այսպիսով, «Մեղուն», հավասարապես նաև «Մաղիկը» Ս. Ոսկանյանին դնում էին Մ. Նալբանդյանի ու Ս. Նազարյանի կողքին, նրա «Արևելք» և «Արևմուտք» հանդեսները՝ «Հյուսիսսփայլի» կողքին և ցասումով ու ամփոսանքով արձանագրում, որ այդ հրապարակախոսները և պարբերականները դատապարտվել են լուսթյան:

Նույն այս գաղափարն է արտահայտված «Մեղունի» 1863 թ. ապրիլի 30-ի համարի առաջաբանում, որի հեղինակը, հավանաբար, Հ. Սըվաճյանն է: Այստեղ նույն ցասումով «Մեղուն» հարցնում է. «Ո՞ր են Նալբանդյաններն ու Նազարյանները, այն հայ հորիզոնին ջահերը, ո՞հ, կլռեն այսօր հակամալից բռնադատյալ... Ո՞ր են Ոսկանյանները... այսօր օտար երկնքի տակ լռին միայնության մեջ թաղված երկար կճգնեն: Ո՞ր թշնամիդ գիտություն, տակավին բավական չեղա՞վ, որ այսպիսի ազատ և օգտակար գրիչները անամոթաբար կաշկանդեր ես... մինչև ե՞րբ»³¹:

Հագիվ երկու շաբաթ անց՝ մայիսի 14-ին, «Մեղուն» անդրադարձավ Ս. Ոսկանյանի դեմ հարուցված այն խոչընդոտին, որի հետևանքով նա կիսատ էր թողել է. Սյուրի «Թափառական հրեայի» թարգմանությունն ու հրատարակությունը: Հանդեսը գտնում էր, որ այդ գործը «(եթե լսածնիս շիտակ է) հայագեմ ճիզվիթներու թունալից մանգաղը արմատին խլեց» և խոստանում էր մի այլ անգամ պատմել, «թե ինչ միջոցով թշնամին արգիլեց այս գրքին թարգմանությունն ու տպվիլը»³². սակայն «Մեղունում» ոչինչ չի տպագրվել այդ մասին: Հունիսի 11-ի համարում «Մեղուն» դիմել է Բերանժեի հակակղերական այն բանաստեղծությանը, որ հայերեն էր թարգմանել Ս. Ոսկանյանը³³: Սեպտեմբերի 7-ի համարում, առաջինը հայ պարբերականներից, «Մեղուն» ազդարարել է, որ մի քանի տարի առաջ դադարած «Արևմուտքը» «տարեգլխուն նորեն պիտի սկսի շարունակվիլ արգո Ստեփան Ոսկանյանի խմբագրությամբ Փարիզի մեջ»³⁴:

Պետք է առանձնահատուկ շեշտել, որ «Մեղուն» մասնակի հարցերում չէ որ համակրանք էր արտահայտում Ս. Ոսկանյանի և նրա հանդեսների նկատմամբ: Ծրագրային խնդիրներում նույնպես Հ. Սըվաճյանի պարբերականը համերաշխվում էր նրանց հետ և այդ մասին ևս արդեն բացեիքաց հայտարարում: Նույն 1863 թ. ապրիլին «Մեղունում» շարունակաբար լույս է տեսել ծրագրային մի հոդված, որի հեղինակը, թեև հանդեսի խմբագրությունը

²⁹ «Մաղիկ», 1863, № 62, էջ 505—507:

³⁰ «Մեղուն», 1863, № 192, էջ 75:

³¹ Նույն տեղում, № 197, էջ 113:

³² Նույն տեղում, № 199, էջ 131:

³³ Նույն տեղում, № 203, էջ 166: Աստղանիշ ստորագրությամբ հոդվածում Բերանժեից քաղված է «Ար» գիրքագեմը, ուստի ելանք» սկզբնատողը: Ուշագրությամբ ընթերցելով «Մեղունի» 1863 թ. № 203-ի այն հոդվածը, ուր բերվում է Բերանժեի բանաստեղծական տողը, նաև հնարավոր ենք համարում, որ նրա հեղինակը հենց Ս. Ոսկանյանը լինի: Այս դեպքում հարկ կլինի խոսել 1860—1863 թթ. «Մեղունին» Ս. Ոսկանյանի աշխատակցության մասին, սակայն հարցը դեռ պետք է լրջորեն քննել:

³⁴ «Մեղուն», 1863, № 217, էջ 279:

ստանձնել էր Ար. Մուրադյանը, թերևս Ն. Սըվաճյանն է³⁵ (մինչ այդ՝ հունվարից սկսած՝ № 183—192-ը, այդ պարտականությունը ստանձնել էր Ն. Հովսեփյանը՝ մոռացված, բայց ուշագրավ մի հրապարակախոս, որ պատիվ է ունեցել լինելու Ն. Սըվաճյանի զինակիցը)։ Այդ հոգվածում զարգացվում են «Մեղուի» առաջին ծրագրային հոգվածի՝ «Համառոտ տեսություն հայոց անցյալ, ներկա և ապագա վիճակներուն վրա» գաղափարները և կրում է միանման խորագիր՝ «Թորգոմյան տանը հին ու նոր վիճակը»³⁶։

Հայոց դժնդակ ճակատագիրը ուրվագծելուց հետո հոգվածն ազդարարում է, որ հասել է ժամանակը «տգիտության կատաղի ալյաց բուռն հարձակմունքն ազատելու համար», ապա արձանագրում. «Այս նվիրական պաշտոնը կատարեց Մեղուն... Որուն ձայնակից եղան և արձագանք տվին հեռուն, Արևելք, Արևմուտք, Հյուսիսափայլ և այլն»³⁷։ Ազատ և համարձակ խորհրդածությամբ «Մեղուն» ապացուցում է այդ պարբերականների ազդեցութունը, ճշմարտասեր լինելը, շեշտում, որ դրանք «զոհ եղած են խավար բռնավորության», որ դրանց «հավիտենական էջերը... կմնան և պիտի մնան իբրև անցելուն վկայությունը գալու նոր սերունդին»³⁸։

Ծրագրային նույնանման զուգահեռության շարքին պետք է դասել նաև Համբնեի «Առակ» խորագրով բարոյախոսական—կոչի արտատպությունը «Մեղուի» նույն՝ 1863 թ. ապրիլի 9-ի համարում՝ «Արևմուտքի» դարձյալ առաջին շրջանի՝ 1859 թ. մարտի 1-ի համարից՝ «Արևմուտքեն առնված» նշումով։ Դեմոկրատական երկու հանդեսները՝ «Արևմուտքը» և «Մեղուն» միատեսակ էին ընկալում Համբնեի բարոյախոսությունը և միևնույն նպատակով էին դիմում նրա երկերին³⁹։ Եվ դա միակ փաստը չէ նրանց գործունեության մեջ։

Վերջապես հարկ է անդրադառնալ ծավալով փոքրիկ, բայց իմաստով բավականաչափ մեծ ու խոստուն այն հոգվածին, որ «Մեղուն» 1864 թ. մարտի 28-ին նվիրել է կրկին հրատարակվող «Արևմուտքին»։ Նախ ջերմորեն ողջունելով «Հյուսիսափայլի» հրատարակության վերսկսվելը, «Մեղուն» այնուհետև առանձին անդրադարձել է «Արևմուտքին»։ Ն. Սըվաճյանի հանդեսը գրել է. «Արևմուտք ալ Փարիզեն սկսավ վերստին հրատարակվիլ դարձյալ պ. Ս. Ոսկանի խմբագրությամբ, այն անձին, որ գիշեր ցերեկ հայրենիք և ազատություն կերազե ու կերկնե. հսկայաբայլ հառաջադիմություն կբաղձա ազգին և այս նպատակով փոքր-ինչ խիստ է իր պահանջողությանց մեջ. իր եռանդոտ բնավորությամբը կուզե, որ ազգը ցատկե՝ մինչդեռ ուղիղ քալելու նոր պիտի

³⁵ Այս ենթադրության օգտին է խոսում այն, որ հոգվածում մեջ են բերված ընդարձակ հատվածներ Ն. Սըվաճյանի մի այլ հոգվածից, որ լույս է տեսել «Մեղուի» 1861 թ. հունվարի 10-ի համարում (Ն. Սըվաճյան, նշվ. աշխ., էջ 131—139, 531)։

³⁶ «Մեղու», 1856, № 1, 2, 4, 5, 1857, № 10 և 1863, № 194—196։

³⁷ Նույն տեղում, 1863, № 194, էջ 90։

³⁸ Նույն տեղում, № 195, էջ 97—98։

³⁹ Նշենք, որ հայ հրապարակախոսությունը հաճախ է դիմել Համբնեի ստեղծագործություններին, օգտվել նրա ալլաբանական լեզվից ու բարոյախոսությունից։ Նրա գործերին են դիմել մասնավորապես նաև Ն. Հիսարյանը, Ե. Տեմիրճիպաշյանը, Մուշեղ եպիսկոպոսը և ուրիշներ։ Ռեակցիոն գաղափարախոսները, ընդհակառակը, քննադատում էին Համբնեին։ Նրա դեմ հարձակումներ է գործել, օրինակ, Ն. Զամուռյանը՝ «Հայաստան» թերթում։

վարժի. մեծ բաներ կսպասե դեռ տղա ազգի մը. այսուամենայնիվ,— եզրափակում է «Մեղուն»,— կցանկանք, որ ըլլա ըստ սրտի յուրում, և կարելի ըլլա իրեն տեսնել, ինչ որ կփափաքի տեսնել»⁴⁰:

Ակնառու վերապահութիւն կա «Մեղունի» խոսքում, բայց և առավել ակնառու է Հ. Սըվաճյանի համերաշխութիւնը Ս. Ոսկանյանի հետ: Եւ դա է հենց կարևորը: Այս համերաշխութիւնը կայուն էր ու տևական, նաև խոստովանալի: Հետագա տարիներին Հ. Սըվաճյանի և Ս. Ոսկանյանի, հավասարապես նաև նրանց հանդեսների հնարավոր համերաշխ գործակցության երաշխիք է այն համանման դիրքը, որ նրանք գրավում էին Ազգային սահմանադրության գործադրության և ազգային հաստատութիւնների գործունեության նկատմամբ: Ելնելով ստեղծված կացութիւնից և ձեռք բերածը լիովին կորցնելու իրական վտանգից, «Մեղունի» խմբագիրը 1864 թ. հունվարին «Մասիսում» գրել է. «Ազգային նորահաստատ խաղաղության խարխուլ հիմքերը երեքցնելու երկյուղը, սաստիկ սանձ մը կդնե ճշմարիտ հայուն գրչին և տակավին պահ մը ալ համբերել կպատվիրե»⁴¹: Նույն մտահոգութեամբ ու շրջահայեցութեամբ, կարծես թե ձայնակցելով Հ. Սըվաճյանին, 1864 թ. փետրվարի 1-ին, Փարիզում իր հրատարակութիւնը վերսկսած «Արեւմուտքի» հենց առաջին համարում, Ս. Ոսկանյանը հայտարարում է, թե «ամոթ չենք սեպեր... լուրջութիւն պահել: Հիմա խոսիլ հայրենիքի վնաս տալ է...»⁴²:

Որ Հ. Սըվաճյանի և Ս. Ոսկանյանի միջև գոյութիւն ունեւրնող հանրութիւն, որ նրանք հավասար չափով անցանկալի էին հետագիւմ գործիչների համար, մասնավորապէս երևում է նրանց ընդհանուր հակառակորդ «Մասիսի» մի հոդվածից: 1869 թ., երբ դադարել էին «Արեւմուտքը» և «Մեղուն», երբ փաստորեն նրանց խմբագիրները զրկված էին հակառակորդների դեմ հանդես գալու հնարավորութիւնից, «Մասիսն» անդրադարձավ Ս. Ոսկանյանի նոր-նոր հրատարակվել սկսող ֆրանսերեն «Լա Ռեֆորմ» թերթին: Ի տարբերութիւն «Արշալույս արարատյանի», «Մասիսին» ծածկանունով աշխատակցող վաղարշը կոչ էր անում ձեռնպահ մնալ Ս. Ոսկանյանի թերթի նկատմամբ, առաջմ չբաժանորդագրվել: Նա իր խոսքն ավարտում է նրանով, որ Ս. Ոսկանյանին մաղթում է այն, ինչ վիճակվել է «Մեղունի Մեչախնային», այսինքն՝ նրա թերթի խափանում⁴³:

Հայ մշակույթի երկու երախտաշատ ուսումնասիրողներ՝ Լեոն և Հ. Ասատուրը, լավ ծանոթ էին Հ. Սըվաճյանի և Ս. Ոսկանյանի գործունեությանը, նրանց հանդեսներին՝ «Մեղունին», «Արեւելին» ու «Արեւմուտքին»: Սրանից ուղիղ ութսուն տարի առաջ Լեոն նկատել է, որ «Մեղուն» և «Հյուսիսափայլը» հղել են Ս. Ոսկանյանի «Արեւելի» «արժանավոր հաջորդները»⁴⁴, իսկ Հ. Ասատուրն արձանագրել է, որ «Սըվաճյանը կպատկաներ պայքարող հրապարակագիրներու այդ դպրոցին, զոր հիմնած էր Ստեփան Ոսկան իր Արեւելքով...»⁴⁵:

40 «Մեղուն», 1864, № 236, էջ 78:

41 «Մասիս», 1864, № 621:

42 «Արեւմուտք», 1864, № 1, էջ 1:

43 «Մասիս», 1869, № 908:

44 «Մուրճ», 1901, № 11, էջ 147—148:

45 Հ. ր. Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 90:

Միևնույնը հաստատող այս երկու հետազոտողները՝ պատմարանն ու բանասերը, ճիշտ են արձանագրել Հ. Սրվաճյանի ու Ս. Ոսկանյանի և նրանց հանդեսների հարաբերակցությունն ու առնչակցությունը:

О СВЯЗЯХ МЕЖДУ ЖУРНАЛАМИ А. СВАЧЯНА И С. ВОСКАНЯНА

(К 150-летию со дня рождения А. Свачяна)

МИКАЕЛ АКОПЯН

Резюме

Деятельность видных армянских публицистов А. Свачяна (1831—1874) и С. Восканяна (1825—1901)— сподвижников революционера-демократа М. Налбандяна, достаточно изучена. Однако в исследованиях не обращено необходимого внимания на идейную общность между ними, издаваемыми ими журналами «Мегу» (1856—1865) и «Аревелк» (1855—1856), «Аревмутк» (1859, 1864—1865).

Эти демократические органы и их редакторы придерживались одинаковых принципов, боролись за национальное возрождение и народное просвещение, бичевали недостатки общественной жизни и отстаивали права народных масс, выступали против консервативно-клерикальных деятелей.